1923 ԹՎԱԿԱՆԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ (ՌԵՖԵՐԵՆԴՈՒՄԻ) ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ադրբեջանի մամուլում հաճախակի են երևում նյութեր, որոնցում խոսվում է, թե իբրև Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին» դեկրետը սիրով են ընդունել Լեռնային Ղարաբաղի աշխատավորները և նույն թվականի ամռանը իբրև մարզում անց է կացվել հանրաքվե, և բնակչությունը դրականորեն է արտահայտվել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին կցելու օգտին: Առանց որևէ համոզիչ փաստարկի, այդ նույնը պնդում են նաև պատմաբաններ Գ. և Ջ. Գուլիևները, Թ. Քոչարլին և ուրիշներ: Պատմության այդ կեղծարարները պարզապես խաչակրաց արշավանք են հայտարարել պատմական ճշմարտությանը և, առանց ամոթի զգացումի, փորձում են իրենց վարկը բարձրացնել սեփական ժողովրդի աշքում: Նրանք բավարարվում են միայն ընդհանուր հայտարարություններ անելով՝ շրջանառության մեջ չդնելով արխիվային որևէ փաստաթուղթ կամ հավաստի այլ աղբյուր: Մինչև անգամ վերջերս տեղի ունեցած Ադրբեջանի հանրապետության գերագույն խորհրդի արտաքին նստաշրջանում ընդունված «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դրության մասին» որոշման մեջ ուղղակի ասված է, թե իբրև 1923 թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը արժանացել է «ռեգիոնի ամբողջ բնակչության աջակցությանը» («Բակինսկի ռաբոչի», 19 սեպտեմբերի 1989 թ.), ասել է, թե Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու և Ադրբեջանին կցելու ակտը արժանացել է Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և Անդրկովկասի մյուս տարածքների բնակչության հավանությանը: Թերևս համաշխարհային պատմության մեջ նման կեղծիքի ոչ մի տեղ չհանդիպենք: Երբ պետության բարձրագույն մարմինն է անամոթաբար ստում և կեղծում, դա արդեն դուրս է մարդկային արժանապատվության սահմաններից: Այդ ո՞ր հայը կամ վրացին է ծափահարել վերոհիշյալ դեկրետ կոչեցյալը, եթե, իհարկե, չհաշվենք մի քանիսին, որոնք ստորաքարշություն էին անում Ադրբեջանի պարագլուխների առաջ (Լևոն Միրզոյան, Արմենակ Ղարագյուզյան, Սերո Մանուցյան, Սանակ Դավլաթյան): Ինչպե՞ս թե Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու դեկրետը արժանացել է «ռեգիոնի ամբողջ բնակչության աջակցությանը»: Բախտավոր ենք, որ դեռ չեն ասում՝ այն արժանացել է Արևելքի ժողովուրդների կամ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հավանությանը: Հավատացեք, նման պրովոկացիոն հայտարարություն կարող է հորինվել միայն Ադրբեջանում: Այնուամենայնիվ, ես այդ համոզման եմ, լավ իմանալով նրանց պատմությունն ու սովորությունները:

Այժմ պարզենք, թե երբ է առաջ քաշվել Ադրբեջանին կցելու վերաբերյալ Արցախում հանրաքվե անցկացնելու գաղափարը, ինչո՞ւ հանրաքվեի վերաբերյալ կեղծ փաստաթղթերը ձեակերպվեցին Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին դեկրետը հրապարակվելուց հետո, այլ ոչ թե դրանից առաջ, ինչո՞ւ հանրաքվեի մասին արխիվային բնագրերը և ժամանակի մամուլը լռում են: Ահա հարցեր, որոնք պարզաբանելու կարիք են զգում:

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը դեռևս 1913 թ. գրել է, որ ինքնորոշման իրավունքը «նշանակում է հարցի լուծում հենց *ոչ թե* կենտրոնական պառլամենտի կողմից, այլ *անջատվող փոքրամասնության* պառլամենտի, սեյմի, ռեֆերենդումի միջոցով» (Վ. Ի. Լենին, Երկ հ. 24, էջ 276—277): Վլադիմիր Իլյիչը ապա բացատրում է, թե «ինքնորոշման իրավունքը» նշանակում է *այնպիսի* դեմոկրատական հասարակարգ, որտեղ ընդհանրապես լինի դեմոկրատիա, բայց հատկապես *անկարելի լինի* անջատման հարցի *ոչ դեմոկրատական* լուծումը... Պրոլետարիատը պահանջում է այնպիսի դեմոկրատիա, որը *բացառում է* պետության սահմաններում ազգերից մեկին բռնությամբ պահելը» (նույն տեղում, էջ 277): Մեծ առաջնորդի այս ասածները, անշուշտ, գիտեն Ադրբեջանում և վերևում՝ Մոսկվայում: Գիտեն, բայց խեղաթյուրում են և ինչպես ԽՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանն է դիպուկ նկատել, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի անտեսումը «նշանակում է վարկաբեկել կուսակցության ազգային քաղաքականությունը» («Պրավդա», 21 սեպտեմբերի, 1989 թ.), այսինքն՝ խեղաթյուրել լենինյան ուսմունքը: Վ. Ի. Լենինը, ինչպես տեսնում եք, ռեֆերենդումը ընդունում է որպես «անջատվող փոքրամասնության պառլամենտի» վճռի միջոց: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պառլամենտը՝ ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը իր վճիռը կայացրել է 1988 թ. փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջաններում: Ինչո՞ւ չեն ցանկանում նանաչել միանգամայն արդարացի, սահմանադրական պահանջներին համապատասխանող, կուսակցության ազգային քաղաքականությունից բխող այդ որոշումները:

Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու գաղափարն առաջին անգամ առաջ է քաշվել 1920 թ. դեկտեմբերին: Հայտնի է, որ նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմը Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելու առթիվ ընդունած իր որոշման մեջ գրել է. «Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի մեջ եղած սահմանավեճերը հայտարարվում են վերացած: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասը»: Այս որոշման հիման վրա կազմված դեկլարացիան Նարիմանովը դեկտեմբերի 1-ին ընթերցեց Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում, որը հաջորդ օրը որոշ փոփոխությամբ հրապարակվեց Ադրբեջանի մամուլում: Ահա այդ տեքստը. «Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասերն են, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է *ինքնորոշման լիակատար իրավունք*» (ընդգծումը մերն է— Հ. Ա.): Այսպիսով, Նարիմանովը մտացածին ձևով Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը կապում է հանրաքվեի (ռեֆերենդումի) հետ: Հետագայում նա բազմիցս է ակնարկում այդ մասին, սակայն երբեք էլ չէր շտապում Լեռնային Ղարաբաղում անցկացնել հանրաքվե: Դեռ ավելին. կան տվյալներ, որ, երբ 1923 թ. հրապարակվում է Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու վերաբերյալ դեկրետը, նա Մոսկվայից գրում է Բաքու և պահանջում հրաժարվել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու գաղափարից, շեշտելով, թե ինքը դրա համար չէ այնքան պայքարել ու Ղարաբաղը բաղել Ադրբեջանի կազմում: Այդ նամակը հրապարակվեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի վերջերս տեղի ունեցած նստաշրջանում:

Հայտնի է, որ Ստալինի ճնշման տակ Անդրերկրկոմը 1921 թ. հուլիսի 5-ին ընդունեց մի որոշում, ըստ որի Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզի իրավունքով պետք է կցվի Ադրբեջանին: Անօրեն և իրավական հիմքից զուրկ այդ որոշմանը սահմանադրական ատան տալու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունը շտապ կարգով Արցախ է ուղարկում Լևոն Միրզոյանին, Ալիհեյդար Կարալին և ուրիշների ու հայտարարում՝ ինչ գնով էլ որ լինի, աշխատավորներից կորզել ինքնավարության գաղափարին հավանություն տալու երաշխիք: Նրանք Արցախի լեռնային շրջաններում հրավիրեցին խորհուրդների արտահերթ համագումարներ և փորձեցին սպառնալիքի տակ այնպիսի որոշումներ ընդունել տալ, որոնք կբխեին Ադրբեջանի ցանկություններից: Ադրբեջանի վերոհիշյալ պատմաբանները այդ առթիվ հանախակի են վկայակոչում 1921 թ. օգոստոսի 1-ին Հաղորտի գյուղում տեղի ունեցած Վարանդայի խորհուրդների արտահերթ երկրորդ համագումարը, թե իբրև այդտեղ որոշում է ընդունվել հավանություն տալ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում մնալու գաղափարին: Նախ՝ Վարանդան ամբողջական Արցախ չէր, երբ կողքին կային Դիզակ, Խաչեն, Գյուլարան և այլ տարածքներ, հետո՝ չէ՞ որ ոչ մի շրջանային համագումար նման վճիռ չի կայացրել, այլապես Ադրբեջանի պատմաբանների ձայնն ավելի բարձր կհնչեր: Այնուհետև, մինչև 1923 թ. աշունը Լեռնային Ղարաբաղը որպես մի վարչական-տերիտորիալ միավոր գոյություն չուներ: Այն ժամանակ Արցախը բաժանված էր Շուշիի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի և Գանձակի գավառների, ասել է թե Լեռնային Ղարաբաղի ներկայիս վարչատնտեսական տարածքը մտնում էր նշված գավառների մեջ: Այդ կարգը գոյություն ուներ 1868 թ., երբ 1867 թ. դեկտեմբերի 9-ի կանոնադրության համաձայն, Անդրկովկասում ստեղծվել էր նոր՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը: Արցախի ամբողջ հայությունը 1918 թ. սկսած պայքարում էր երկրամասի հայկական բոլոր շրջանները միավորել մի վարչական միավորման մեջ և վերամիավորվել մայր Հայաստանին: Արցախը 1918—20 թթ. անկախ վարչական միավոր էր, որին ղեկավարում էր նրա համագումարների կողմից ընտրված Ազգային խորհուրդը: Միայն Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, Ադրհեղկոմը, շարունակելով նախկին մուսավաթական կառավարության քաղաքականությունը, փորձում էր 11-րդ կարմիր բանակի աջակցությամբ Արցախը բռնակցել Ադրբեջանին: Դրան հաջորդեցին մի շարք անօրինականություններ: Ադրբեջանի պարագլուխները շատ լավ էին գիտակցում, որ վաղ թե ուշ ջրի երես կբարձրանան այդ անօրինականությունները: Հենց դրա համար էլ ամեն ջանք գործադրում էին համոզելու, կաշառելու արցախցիներին, որոշում ընդունել տալ, թե իբրև իրենք համաձայն են մնալու Ադրբեջանի կազմում: Հենց նման մի փորձ կատարվեց վերոհիշյալ Վարանդայի Հաղորտի գյուղում: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետական արխիվի 485 և 486-րդ ֆոնդերում պահվում են Շուշիի գավառի երկրորդ տեղամասի, այսինքն՝ Վարանդայի և Ջիվանշիրի գավառի Աղդարայի տեղամասի (Մարտակերտի) բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների խորհուրդների վերաբերյալ 1920—23 թթ. նյութերը: 485-րդ ֆոնդի 14-րդ գործում պահվում է 1921 թ. օգոստոսի 1-ին Վարանդայի խորհուրդների վերոհիշյալ արտահերթ համագումարի արձանագրության մերենագիր պատճենը: Համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Հաղորտի է ժամանում Լևոն Միրզոյանը, որն այն ժամանակ զբաղեցնում էր Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահի տեղակալի և արհմիությունների հանրապետական խորհրդի նախագահի պաշտոնները: Այդ օրերին Արցախ է ժամանում նաև հանրապետության ռազմածովային կոմիսար Ալիհեյդար Կարալը: Վերջինս մասնակցում է շրջանային այն համագումարներին, որտեղ մեծամասնությունը կազմում էին մուսուլմաններ: Կարալը իր մի շարք ելույթներում Արցախի բնակչությանը հասկացնում է, թե ովքեր կհակառակեն Ադրբեջանի կամքին, երանց դեմ կգործադրվեն հանրապետության ռազմական ուժերը:

Հաղորտի գյուղում հրավիրված Վարանդայի խորհուրդների արտահերթ երկրորդ համագումարի օրակարգի հիմնական հարցերի մասին զեկուցում է Լևոն Միրզոյանը: Նա, հանդես գալով Արցախի ինքնորոշման հարցի շուրջը, գրված է արձանագրության մեջ, պնդում է, թե նպատակահարմար չէ այդ հարցը բննարկել համագումարում, որովհետև իբրև բոլոր տեսակետից՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր՝ Լեռնային Ղարաբաղը կապված է Բաքվի հետ: Բավական է, որ Ղարաբաղին տրվում է ինքնավարություն և ենթարկվում է Բաքվին: Պատգամավոր Պետրոսյանը համագումարին ներկա 47 պատգամավորների անունից հայտարարում է, որ ոչ ոք չի ցանկանում արտահայտվել, որովհետև «բոլորին լավ հայտնի է Խորհրդային Հայաստանի հետ միավորված լինելու գյուղացիության ցանկությունը» (նշված գործ, p. 70): Այսպես էլ ավարտվում է համագումարը, առանց որևէ որոշում ընդունելու: Իսկ թե արձանագրության ինչպիսի տարբերակ է հասել Բաքու, դա արդեն հայտնի է Ադրբեջանի պատմաբաններին, որի հրապարակումից համառորեն հրաժարվում են: Նույն ոգով են ընթացել նաև մյուս շրջանների համագումարները:

Եվ ոչ միայն 1921 թ.: Այնուհետև ամբողջ մեկուկես տարի, մինչև 1922 թ. դեկտեմբերը, Արցախում ոչ մի անգամ չի դադարել, գրեթե չի եղել շրջանային, տեղամասային որևէ համագումար, կամ աշխատավորների հավաք, որտեղ չարտահայտվեին մայր Հայաստանին վերամիավորվելու մասին: Հենց դրա համար էլ Ադրբեջանում անընդհատ ձգձգում և չէին կազմում Լեռնային Ղարաբաղի ինքնավարության վերաբերյալ դեկրետը: Ադրբեջանի էմիսարները, հանախակի լինելով Արցախում, արցախցիներին խոստանում էին բաց թողնել նավթ, աղ, կտորեղեն, դաշտավայրային տարածություններից առատավայրեր հատկացնել, միայն թե համաձայնվեն մնալ Ադրբեջանի կազմում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

1923 ԹՎԱԿԱՆԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ (ՌԵՖԵՐԵՆԴՈՒՄԻ) ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Ադրբեջանը հույս ուներ, թե Լեռնային Ղարաբաղին իբրև ինքնավարություն տալու միջոցով կմարվի մայր Հայաստանի հետ վերամիավորվելու արցախցիների պայքարը: 1922 թ. գարնանը տեղի ունեցած խորհուրդների վերընտրությունների ժամանակ երկրամասի աշխատավորները ցուցաբերում են մեծ ակտիվություն: Գյուղական, ավանային, տեղամասային և գավառային խորհուրդների նիստերում և համագումարներում համարձակորեն առաջ էր քաշվում Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու անգիջում պահանջը: Որպես դրա լավագույն ապացույց, հիշատակենք հետևյալ փաստը: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմաերկրագիտական թանգարանում պահվում են ծննդով Արցախի Փիրջամալ գյուղից Ս. Գ. Միրզաբեկյանի հուշերը, որը գրվել է 1972 թ. այսինքն՝ ալիևյան ժամանակաշրջանում: Ցանկալի է այդ փաստաթուղթը հրապարակել ամբողջովին, բայց առայժմ բավարարվենք բովանդակության շարադրանքով: Ահա թե ինչ է պատմում Միրզաբեկյանը. «1922—23 թվականներին Լեռնային Ղարաբաղի բանվորների և գյուղացիների խորհուրդները ենթարկվում էին Մոսկվային, Կենտգործկոմին: 1922 թ. երկրորդ կեսին, նոյեմբերին, երկրամասի գյուղական և շրջանային խորհուրդների նախագահներին և քարտուղարներին կանչում են Շուշի խորհրդակցության: Հավաքվածներին հայտնում են, թե Բաքվից եկել են մի շարք պատասխանատու աշխատողներ բանակցելու համար: Պարզվում է, որ եկել են Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի արդեն առաջին քարտուղար Ալիհայդար Կարաևը և երկրորդ քարտուղար, միևնույն ժամանակ Բաքվի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար Լևոն Միրզոյանը: Նախ՝ ելույթ է ունենում Կարաևը: Նա բացատրելով հավաքի նպատակը, նշում է, թե Մոսկվայի համար դժվար է ճկուն ղեկավարել իրարից անջատված մարզերն ու գավառները, մանավանդ որ «խորհրդային նոր պետության շինարարությունը պահանջում է առանձին դեպքերում կիրառել արտակարգ միջոցառումներ, որը ներկա պայմաններում համարյա թե անիրագործելի է»: Այնուհետև նշում է, թե Մոսկվայից իրենց երաշխավորել են «տեղական խորհրդային իշխանությունների հետ քննարկել հանրապետությունների առանձին շրջանները և մարզերը խոշորացնելու (միավորելու) հարցը՝ ելնելով տնտեսական և ազգային հատկանիշներից»: Կարաևը պնդում է, թե Լեռնային Ղարաբաղը պետք է միանա Ադրբեջանին: Նա վկայակոչում է Արցախի տնտեսական կապը Ադրբեջանի հետ, դարաբաղցիների Բաքվում գտնվելը, Ռուսաստանից հացամթերք Բաքու—Եվլախ երկաթգծով Ղարաբաղ փոխադրելը, Բաքվից նավթ և այլ մթերքներ ստանալը, մինչդեռ դարաբաղցիները զրկված են Հայաստանի հետ հաղորդակցության միջոցներից: Նա պահանջում է «համաձայնվել Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Ադրբեջանական ԽՍՀ-ին, այսինքն՝ մտնել Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ, (ընդգծումը մերն է — Հ. Ա.): Միանգամայն պարզորոշ է, որ 1922 թ. Լեռնային Ղարաբաղը անջատ էր և անկախ, չէր մտնում Ադրբեջանի կազմի մեջ:

Կարաևի ելույթից հետո, պատմում է Միրզաբեկյանը, «դահլիճում սկսվում է աղմուկ, ռեպլիկներ, նման առաջարկության դեմ ելույթներ: Նկատելի էր, որ խորհրդակցության մասնակիցները, ձայների բացարձակ մեծամասնությամբ համաձայն չեն այդպիսի տարբերակով վերամիավորմանը»: Ելույթ ունեցողներից Արսոն (Արսեն Հովհաննիսյան), որը եղել է 1919 թ. օգոստոսին տեղի ունեցած Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի նախագահը, արցախահայության անունից հայտարարում է, թե Լեռնային Ղարաբաղը երբեք չի մտնի Ադրբեջանի կազմի մեջ, հիշեցնելով, որ ադրբեջանական ազգայնականների կողմից ոչնչացվել են հայկական բազմաթիվ գյուղեր, Շուշի քաղաքի հայկական մասը, բարբարոսաբար հրի ու սրի են մատնել բազմահազար հայերի: Հենց այդ ամենի համար էլ հավաքի մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի «վերամիավորումը Ադրբեջանի ԽՍՀ-ին ցանկալի չէ»: Ելույթ ունեցողներից ոմանք էլ հայտարարում են, թե նման բարդ և պատասխանատու հարցի վճռումը չի մտնում խորհրդակցության մասնակիցների իրավունքների մեջ: Նրանք գտնում էին, որ հարցը պետք է վճռվի երկրամասի բնակչության հանրաքվեի միջոցով: Դրա համար պահանջում են իրենց տուն արձակել, ժամանակ տալ, որպեսզի այդ մասին խորհրդակցեն ժողովրդի հետ: Մի շարք պատգամավորներ հայտարարում են, որ եթե խոսքը վերաբերում է միավորմանը, ապա մեզ՝ Լեռնային Ղարաբաղի աշխատավորներիս համար նպատակահարմար և ցանկալի է մտնել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ:

Այնուհետև ելույթ է ունենում Լևոն Միրզոյանը: Նա իր ելույթում կրկնում է իր տեսության մշակված տեսակետը, թե իբրև տնտեսական տեսակետից նպատակահարմար է Լեռնային Ղարաբաղը բողնել Ադրբեջանի կազմում, Հայաստանի հետ վերամիավորումը հնարավոր չէ, որովհետև Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև ընկած է Քրդստանը: Այդ ժամանակ, պատմում է Միրզաբեկյանը, «դահլիճում ընկ. Միրզոյանի հասցեին խորհրդակցության մասնակիցների կողմից հնչում էին սուր ռեպլիկներ»: Ընդհանրապես ելույթ ունեցողներից մեծամասնությունը «բացասական է արտահայտվում» Կարաևի և Միրզոյանի «առաջարկությունների նկատմամբ» և պաշտպանում Խորհրդային Հայաստանին վերամիավորվելու տարբերակը»: Կարաևը և Միրզոյանը երեք օր շարունակ «մշակում են» խորհրդակցության մասնակիցներին: Այդ ամենից հետո միայն որոշում են Արցախը թողնել Ադրբեջանի կազմում՝ ինքնավար մարզի իրավունքով: Ցավոք, ոչ Լեռնային Ղարաբաղի մարզային արխիվում և ոչ էլ Բաքվի արխիվներում չգտանք այդ խորհրդակցության արձանագրությունը: Դա, թերևս, շատ բան պարզեր:

Արցախահայությունը խիստ վրդովված էր վերոհիշյալ խորհրդակցության որոշումից, որն ընդունվել է խիստ սպառնալիքների տակ: Չէ՞ որ երկրամասի բնակչությունը գյուղական խորհուրդների նախագահներին և քարտուղարներին նման իրավունք չէին վերապահել: Այդ փաստը ինքնարկման առարկա դարձավ գյուղխորհուրդների նիստերում, կուսքննչներում և համայնքների ժողովներում: Բազմաթիվ բողոքներ ուղարկվեցին Թիֆլիս և Մոսկվա: Վերջապես, երկար պայքարից հետո, 1923 թ. հունիսի 26—28-ը տեղի ունեցած Անդրբերկրկոմի պլենումը որոշեց Արցախի լեռնային շրջաններից կազմել մի վարչատնտեսական միավոր և այն թողնել Ադրբեջանի կազմի մեջ: Մինչև այդ, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի 1922 թ. դեկտեմբերի 15-ի որոշմամբ ստեղծվել էր Լեռնային Ղարաբաղի գործերի կոմիտե, յոթ հոգու կազմով, որի նախագահ նշանակվեց Հայաստանից հետ կանչված Արմենակ Ղարագյոզյանը: Նա դարձավ Ադրբեջանի կամակատարը Լեռնային Ղարաբաղում և հյուսնազաղ կատարում էր Բաքվից ստացված բոլոր հրամանները, ակտիվորեն նպաստում Արցախը Ադրբեջանին բռնակցելուն: Բացի Ղարագյոզյանի առաջ խնդիր դրեց զբաղվել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու նախապատրաստական աշխատանքներով: Ղարաբաղի գործերի կոմիտեն լուծարվեց 1923 թ. հուլիսի 24-ին: Նրա փոխարեն ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որի նախագահ կարգվեց նույն Արմենակ Ղարագյոզյանը: Այն լուծարվեց նույն թվականի նոյեմբերի 9-ին:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ կազմելու վերաբերյալ դեկրետը լույս աշխարհ եկավ Արցախի աշխատավորների կամքին ու ցանկությանը հակառակ: Դա այդպես էր: Բայց ինչո՞ւ Արցախում հանրաքվե չկազմակերպվեց մինչև դեկրետի ընդունումը, չէ՞ որ այդպես է պահանջում հանրաքվեի սկզբունքը: Բանն այն է, որ Ադրբեջանում շատ լավ՝ հասկանում էին, որ նման հանրաքվե կազմակերպելու դեպքում արցախահայությունը կվերակեր Ադրբեջանին կցվելու դեմ և մայր Հայաստանին վերամիավորվելու օգտին: Բայց քանի որ կատարվել է անօրինություն, ուստի Ադրբեջանում որոշեցին ինչ-որ կերպ օրինականացնել դեկրետը, այսինքն՝ Արցախի աշխատավորներից կորզել հավանության և համաձայնության հավաստիք: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով, չէ՞ որ հանրաքվե իրականացնելու դեպքում աշխատավորները «ոչ» կասեին: Եվ, վերջապես, ինչո՞ւ Ադրբեջանում այսօր այդքան ամուր են կառչել Արցախում չկազմակերպված հանրաքվեն կազմակերպված հանձնելու պոչից:

Բացատրական բառարանում գրված է. «Հանրաքվե— ընդհանուր քվեարկության՝ համաժողովրդական վճռի միջոցով կարևոր օրենսդրական նշանակություն ունեցող հարցեր վճռելը», քաղաքական բառարանում՝ «Հանրաքվեն ժողովրդի կարծիքի բացահայտումն է, հատկապես, կարևոր հարցերի առթիվ ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիների քվեարկության», իսկ հանրագիտարանում՝ «Պարտադիր համաժողովրդական հարցումը քննարկվում է ընտրական ողջ կորպուսում...»:

Հիմա տեսնենք, թե այդ պահանջներից որն է իրագործվել Լեռնային Ղարաբաղում: Հավատացեք, և ոչ մեկը: Ուշադիր նայեցինք 1923 թ. Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մամուլը: Ոչինչ չգտանք Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի մասին: Մի՞թե հնարավոր է Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում անցկացնել նման քաղաքական միջոցառում, ինչպես հանրաքվեն է, և ոչինչ չգրվի այդ մասին: Ասենք հանրապետական թերթերը հարկ չեն համարել գրել, իսկ ի՞նչ կարելի է ասել «Խորհրդային Ղարաբաղ» թերթի մասին: Ահա թերթում ենք 1 (5—8—23 թ.), 2 (12—8—23 թ.), 3 (19—8—23 թ.) և 4 (28—8—23 թ.) համարները: Այստեղ ևս ոչինչ չենք գտնում հանրաքվեի մասին: Իմ ձեռքի տակ է նույն թերթի 18-րդ (18—11—1923 թ.) համարը, որը ամբողջովին նվիրված է նոյեմբերի 6-ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհուրդների առաջին համագումարին: Թե ժամանակավոր հեղկոմի հաշվետվության բովանդակության շարադրանքում և թե ընդունված բանաձևերում ոչ մի խոսք չկա հանրաքվեի մասին: Ապա նայեցինք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետական արխիվի 1-ին և 460-րդ ֆոնդերը, որոնցում պահվում են ԼՂԻՄ ժամանակավոր հեղկոմի և ԼՂԻՄ խորհուրդների առաջին համագումարի նյութերը: Ո՞վ զարմանք, այստեղ ևս ոչինչ չգտանք: Մի՞թե հնարավոր է: Բայց չենք նահանջում, շարունակում ենք որոնումները: Թերթում ենք ԼՂԻՄ ներքին գործերի կոմիսարիատի (ֆ. 64), որը կազմակերպվել է 1923 թ. օգոստոսի 4-ին, ԼՂԻՄ քաղաքային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների (ֆ. 6) 1923 թ. նյութերը, ինչպես և Հարությունգոմերի (ֆ. 353), Հաթերքի (ֆ. 359), Վանքի (ֆ. 155), Ջանյաթաղի (ֆ. 360), Կարաքենդի (ֆ. 134), Կիչանի (ֆ. 357), Մադաղիսի (ֆ. 362), Մարգուշևանի (ֆ. 366) գյուղական խորհուրդների, նույնպես 1923 թ. փաստաթղթերը: Դարձյալ ոչ մի խոսք հանրաքվեի մասին: Հարցնում եմ. այդ ի՞նչ հանրաքվե է եղել, որի մասին Բաքվում գիտեն, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ ոչ: Պատմաբան Դուլիևը վկայում է, թե Սերո Մանուցյանը, որն այն ժամանակ կուսակցության Լեռնային Ղարաբաղի շրջկոմի առաջին քարտուղարն էր և միևնույն ժամանակ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիրը, Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի մասին զեկուցագիր է ուղարկել Բաքու, որտեղ նշված է, թե իբրև մարզի բնակչությունը միահամուռ հավանություն է տվել Լեռնային Ղարաբաղին ինքնավարության տալու մասին դեկրետին: Այդ փաստաթղթի հավաստի լինելու մասին ոչինչ չենք կարող ասել, որովհետև մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանի մասնաճյուղի կուսարխիվում մերժեցին մեզ տրամադրել Սերո Մանուցյանին և Արմենակ Ղարագյոզյանին վերաբերող փաստաթղթերը, ինչպես և 89-րդ ֆոնդի շատ նյութեր, որոնք վերաբերում են կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմին:

Իրոք, ի՞նչն է բանը, արդյոք Լեռնային Ղարաբաղում 1923 թ. ամռանը անցկացվե՞լ է հանրաքվե, թե՞ ոչ: Իսկությունը հետևյալն է. Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին դեկրետը հրապարակվելուց հետո Բաքվից Արցախ են ուղարկվում մի խումբ կուսակցական և պետական աշխատողներ, որպեսզի Արմենակ Ղարագյոզյանի, Սերո Մանուցյանի և ոմանց օգնությամբ կազմեն փաստաթղթեր, թե իբրև այստեղ անցկացվել է հանրաքվե և բնակչությունը հավանություն է տվել Ադրբեջանի կազմում մնալու օգտին: Հարցը չի քննարկվում ոչ կուսակցական բջիջներում, ոչ խորհուրդների նիստերում և ոչ էլ հանրաքվե է անցկացվում: Այդ ամենի փոխարեն հրավիրում են համայնքների ներկայացուցիչների անկուսակցական կոնֆերանսներ և խոսում ինքնավարություն տալու վերաբերյալ դեկրետի շուրջը: Եվ դա էլ համարվել է հանրաքվե: Ժամանակակիցները (Հարություն Թումյան, Աբրամ Կիպրեկյան և ուրիշներ) վկայում են, որ Բաքվից ուղարկված այդ գործակալները Շուշի կամ շրջկենտրոններում հավաքում էին կուսակցական «ակտիվիստներին» և սարքել տալիս նախապես կազմված արձանագրություն, որով համաձայնություն էր հայտնվում միանալու Ադրբեջանին: Հարություն Թումյանը իր մեկնաբանության մեջ, որի ձեռագիրը պահվում է Մատենադարանում, պատմում է, թե ինչպես Լևոն Միրզոյանը իր հայրենի Աշան գյուղում Կարաևից ստացած բավականին մեծ գումարով փորձեց կաշառել իր մոտ ազգական Ջավադ Ադրտամյանին՝ բաժանելու համար գյուղացիներին և համոզելու սարքել Ադրբեջանին միանալու արձանագրություն, սակայն կարողացավ մերժում էր ստացել: Այդ օրինակը եզակի չէ: Այդ օրերին Ադրբեջանի դեկավարների կողմից կաշառքի օգտագործումը, կեղծ խոստումներ տալը, անաբեկելը դարձել էր գործողության մեթոդ, մի բան, որի մասին լռում են Ադրբեջանի պատմաբանները:

Ահա ողջ ճշմարտությունը 1923 թ. ամռանը Լեռնային Ղարաբաղում անցկացված կարծեցյալ հանրաքվեի (ռեֆերենդումի) մասին:

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

Խմբագիր՝ Կ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ